Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 23

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Տ. Գալստյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Հ. Վարդանյանը, Բ. Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը և Շ. Վահանյանը, ինչպես նաև Աշտարակ համայնքի բնակիչ Հ. Գևորգյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
4. Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
5. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/
6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/
8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով: Քվեարկությանը չի մասնակցել Ն. Պետրոսյանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցողը նշեց, որ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև 2018թ. բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է տարեկան բյուջեում կատարել փոփոխություններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի:

Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով, հաստատել Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի 2019թ. հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Զեկուցողին՝ հաստիքացուցակի հաստատման վերաբերյալ հարց ուղղեց Վ. Մկրտչյանը, որին տրվեց սպառիչ պատասխան:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հաստատել Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

Գ. Եղիազարյանը նաև նշեց, որ 2018 թվականի համեմատած հաստիքացուցակներում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

10-ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց Ա. Մնացականյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, թույլատրել տրամադրելու /մրցույթով/ կառուցապատման իրավունքով որոշ հողամասեր և դրա համար սահմանել մեկնարկային գին:

Զեկուցողը միաժամանակ նշեց, որ հողամասերի հատակագծերը կցված են որոշման նախագծին:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգային վերջին հարցը ևս ներկայացրեց Արմեն Մնացականյանը, առաջարկեց հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարելուն:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի նոյեմբերի 23-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ